ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24.09.2013թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 96 -ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը մարզի բժշկական կենտրոններում:

   /Զեկ՝. առողջապահության բաժնի պետ Ս. Խաչատրյան/

2. Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական պաշտպանության մասին:

   /Զեկ՝. ընտանիքի, կանանց և իրավունքների պաշտպ. բաժնի պետ Գ. Պողոսյան/

3. Բերքահավաքի և մթերումների վիճակի մասին:

   /Զեկ՝. գյուղատնտ. և բնապահպ. վարչ.պետ Հ. Տերտերյան/

4. Մարզի համայնքների 2013 թվականի ութ ամիսների բյուջեների կատարման մասին:

   /Զեկ՝. ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Խաչատրյան/

Այլ հարցեր.

- Արարատի մարզի տարածքի պատմական երկրաշարժերի և ներկա սեյսմիկ վիճակի մասին:

  /Զեկ՝. արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ ռիսկի նվազեցման վարչության պետ Ռ. Բաղդասարյան /

1. Լսեցին՝

1. Հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը մարզի բժշկական կենտրոններում:

/Զեկ՝. առողջապահության բաժնի պետ Ս. Խաչատրյան/

/կցվում է/

Արտահայտվեց. մարզպետ Է. Բարսեղյան

Հանձնարարվեց.

- **առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Գ. Ավետիսյանին՝**

մինչև ընթացիկ տարվա ավարտն ամբողջությամբ մարել առողջապահական հիմնարկներում կուտակված ֆինանսական պարտքերը,

- **ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Խաչատրյանին՝**

մարզի առողջապահական հիմնարկներում իրականացնել ֆինանսական վիճակի ուսումնասիրություններ,

- **մարզպետի տեղակալ Կ. Հակոբյանին՝**

ուսումնասիրել Արմաշի առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենքային պայմանները և նախապատրաստել գրություն՝ հասցեագրված ՀՍՆԿ-ին :

2 . Լսեցին՝

1. Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական պաշտպանության մասին:

/Զեկ. Ընտանիքի, կանանց և իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյան /

/կցվում է /

Արտահայտվեց. մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

- **ընտանիքի, կանանց և իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյանին՝**

հորդորել բոլոր համայնքների ղեկավարներին հաշմանդամ երեխաների համար ստեղծել ավելի նպաստավոր պայմաններ,

- **սոցիալական ապահովության բաժնի պետ Գ. Միրզոյանին**

մարզի առավել անապահով հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքներին ցուցաբերել դրամական օգնություն

3. Լսեցին՝

1. Բերքահավաքի և մթերումների վիճակի մասին:

/Զեկ՝. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյան/

/կցվում է/

Արտահայտվեց. մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

- **գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ.Տերտերյանին**

առավելագույնս ուշադրություն դարձնել խաղողի բերքահավաքի մթերման և գումարների վճարման գործընթացին:

4. Լսեցին՝

1. Մարզի համայնքների 2013 թվականի ութ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ՝. Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Խաչատրյան/

/կցվում է/

Արտահայտվեց. մարզպետ Է. Բարսեղյանը:

5. Այլ հարցեր՝

- Արարատի մարզի տարածքի պատմական երկրաշարժերի և ներկա սեյսմիկ վիճակի մասին:

/Զեկ.արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ ռիսկի նվազեցման վարչության պետ Ռ. Բաղդասարյան /

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ